Կալավան

Բնակչության թիվը՝ 150

Կալավանը տեղակայված է Բարեբեր գետի ափին, մարզկենտրոնից 107 կմ հեռավորությամբ։ Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1600 մ բարձրության վրա։ Նախկինում անվանում էին Ամրխեր, վերանվանվել է Կալավան 03.04.1991թ։ Հիմնադրվել է 1800 - ականներին։ 1988 թ վերաբնակեցվել է ադրբեջանական ՍՍՀ Շամխորի շրջանի հայաբնակ գյուղերի փախստականներով։ Բնակավայրի շրջակայքում կան դամբարանադաշտեր Կալավան -1, Կալավան - 2 / մ.թ.ա. 3-րդ,-2-րդ, 2-րդ- 1-ին հզմ. / խաչքարերով գերեզմանոց՝ 14-17 րդ դդ, 2,5 կմ հվ. կա քարե դարի բացօթյա կայան։ Այս կայանները Անդրկովկասի կարեւորագույն տեղեկություններ տվող հնագիտական հուշարձաններից են։ Կալավան 1 և Կալավան 2 հնագիտական հուշարձանները վերաբերում են Հին քարե դարին։ Կալավան 1 հուշարձանը թվագրվում է 14-րդ հազարամյակով, իսկ Կալավան 2-ը՝ 34 200 տարեկան է։ Կալավանի կազմում է գտնվում Բարեպատ բնակավայրը։ Գյուղն ունի միջնակարգ դպրոց։

Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, կերային, բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ։ Վերջին տարիներին այստեղ նշանակալի զարգացում է ապրել հնագիտական , արկածային և էկոտուրիզմը։ Տարեկան աշխարհի տարբեր երկրներից Կալավան են ժամանում հազարավոր տուրիստներ։